

## ԲԱՐՔԱՆԱՅԻՆ ԲԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՇՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐՔԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ

### Ո. Գ. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

Արդի գրական արևելահայերենը, ձևավորվելով բարբառային հիմքի վրա, աստիճանաբար իր մեջ է ներառել Արարատյան բարբառի հազարավոր բառեր ու դարձվածաբանական միավորներ: Կազմելով հայերենի բառապաշարի անբաժանելի մասը՝ բարբառային բառերը տարբեր տեղ ու դեր ունեն արդի գրական արևելահայերենի բառապաշարային համակարգում:

Բարբառային բառերը թեպետ հաճախ են դարձել լեզվաբանական քննարկումների առարկա, այնուամենայնիվ, լեզվաբանության մեջ մինչ օրս որոշակիություն ու հստակություն չկա բարբառային բառերի ըմբռնման և որոշ կարգի տերմինների տարբերակման հարցում:

Հայ լեզվաբանության մեջ հաճախ բարբառային տերմինը դիտվում է որպես մի լայն հասկացություն, որի մեջ նկատի են առնվում նաև հայ հին մատենագրությամբ չավանդված ժողովրդական, բարբառային ծագում ունեցող բառերը, և ապա բարբառային այդ ընդհանուր բառապաշարը իր հերթին ստորաբաժանվում է տարբեր ենթաշերտերի (պատմական հայեցակետ), իսկ երբեմն էլ նեղացվում են բարբառային տերմինի սահմանները, որպես բարբառային բառապաշարի մի առանձին շերտի (համաժամանակյա հայեցակետ): Հայ լեզվաբանության մեջ երբեմն էլ նույնացվում են բարբառային և գավառական տերմինները, որոշ դեպքերում էլ գավառական բառերն առանձնացվում են որպես բարբառային բառաշերտի առանձին տարր: Հաճախ էլ բարբառայինը նույնացվում է ժողովրդախոսակցական լեզվի բառերի հետ:

Ա. Մուքիսայանն, օրինակ, տարբերակում է բարբառային և գավառական տերմինները՝ գավառական բառերը նրկայացնելով որպես բարբառային բառերի մի առանձին ենթաշերտ: Նա գավառական է համարում բնիկ հայկական, «մեծ մասամբ հին կյանքը, կենցաղը, առտնին հարաբերությունները ցույց տվող, ինչպես նաև զանազան զբաղմունքներից, գյուղատնտեսական գործիքներից, հին պաշտամունքից, հավատալիքներից, ծեսերից, ինչպես և բուսական և կենդանական աշխարհից վերաբերող, այլևայլ հասկացություն արտահայտող բառերը»<sup>1</sup>:

Ըստ նրա, գավառական բառերի մի մասը, անշուշտ, գրաբարյան շրջանին է պատկանում, թեպետ այդ բառերը գրավոր հուշարձաններում չեն ավանդվել: Նա այդ կարգի բառերից է համարում **սաբլոր**, **աղամորդի**, **բանջար**, **դեղնուց**, **լիկ**, **կրաբանցում**, **հավկուր**, **հաղաբջ**, **հավկիթ** և այլն:

Ա. Մուքիսայանի կարծիքով «գավառական բառերի մյուս մասն էլ գրաբարյան բառերի՝ բառարաններում ձեռք բերած իմաստներն են ներկայացնում. ինչպես՝ **սովորել** (ուսանել), **կարդալ** (ընթերցել), **մեռել** (դի, դիակ), **ճար** (հնար, միջոց), **առնել** (գնել, տիրել, սկսել), **դեղնություն** (դեղնախտ, հիվանդություն), **լիխամ** (ձուկ), **ծիրանի** (ծառ), **ծիծ** (ստինք), **ածել** (լցնել, նվազել, ծու դնել), **ալարել** (ծուլա-

<sup>1</sup> Ա. Մուքիսայան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1989, էջ 174:

նա), աղոթքարան (առավոտ կանուխ, գրք. աղոթատեղի), անքան (անգործ, գրք. բանականություն չունեցող, անխելք, անխոս, մունջ) և այլն»<sup>2</sup>:

Գրական լեզուն հարստացնելու գործում մեծ տեղ հատկացնելով բարբառային բառերին՝ հեղինակը մատնանշում է նրանց գրական լեզու թափանցելու մի քանի ուղիներ:

1. Գրական լեզուն, կազմվելով բարբառային հիմքի վրա, մի շարք բառեր ուղղակի ժառանգել է բարբառներից:

2. Ջգալի թվով բարբառային բառեր գրական լեզու են մուտք գործել խոսակցական լեզվի շնորհիվ:

3. Մյուս ուղին գեղարվեստական գրականությունն է:

4. Գավառական բառերի մի մաս էլ, հեղինակի կարծիքով, գրական լեզու է թափանցել տերմինացման ճանապարհով:

Անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ Ա. Սուքիասյանը երբեմն բարբառային և գավառական տերմինները նույնացնում է՝ բարբառայինի կողքին փակագծերում ավելացնելով գավառական տերմինը<sup>3</sup>: Այս դեպքում, մեր կարծիքով, հեղինակը հիմնականում նկատի ունի գավառական բառերի՝ բարբառային շերտին պատկանելու հանգամանքը: Դա ավելի ցայտուն է երևում հատկապես նրա կողմից բարբառային բառաշերտը արդի գրական հայերենում ըստ գործածության ոլորտների ստորաբաժանելիս:

Ժողովրդական ծագում ունեցող բառերի տարբերակման հարցում իր անհատական մոտեցումն է ցուցաբերել Լ. Եզեկյանը՝ միմյանցից սահմանազատելով բարբառային և ժողովրդախոսակցական լեզվի բառերը: Հեղինակի կարծիքով, ի տարբերություն բարբառային բառերի, որոնք ունեն տարածքային սահմանափակում (գործածվում են միայն մեկ բարբառում կամ խոսվածքում) և հասկանալի են միայն տվյալ բարբառին, ժողովրդական-խոսակցական լեզվի բառերը «գործում են մեր լեզվի տարբեր բարբառներում և ոլորտներում, դրանով իսկ հակադրվում արդեն ընդհանուր ճանաչում գտած գրական լեզվի համակարգի մեջ մտած ձևերին: Ժողովրդական-խոսակցական բառաշերտի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանք լեզվի զարգացման ընթացքում աստիճանաբար ընդհանուր ճանաչում են գտնում, անցնում գրական լեզվի բառապաշարին»<sup>4</sup>:

Նա կտրականապես մերժում է հայ լեզվաբանության մեջ արտահայտված այն կարծիքը, ըստ որի «գեղարվեստական գրականության մեջ օգտագործված բոլոր ոչ գրական բառերն ու ձևերը պայմանականորեն համարվում են բարբառային»<sup>5</sup>:

Լ. Եզեկյանը հստակորեն սահմանազատում է բարբառային և ժողովրդական-խոսակցական բառաշերտերը, հեղինակը, շատ պարզ պատկերացնելով գրական լեզվի և բարբառների, գրական լեզվի և գեղարվեստական գրականության լեզվի փոխադարձ կապը, գտնում է, որ «բարբառային որոշ բառեր ու արտահայտություններ աստիճանաբար անցնում են ժողովրդախոսակցական լեզվի ոլորտը, ապա որոշ գործածությունից հետո մի տեսակ «թրծվում» և ոճական տարբեր նպատակներով գործածվում են գեղարվեստական գրականության մեջ: Ի վերջո, բարբառային այս ձևերը դառնում են գրական լեզվի սեփականությունը, հատկապես, երբ գրական լեզուն չի ունենում այդ հասկացություններն անվանող համապատասխան հոմանիշային ձևեր»<sup>6</sup>:

Հ. Օհանյանը, հայերենի բառապաշարը բաժանելով ըստ գործառական ոճերի, նրանցից («գործառական ոճերից») դուրս է համարում բարբառային բառերը և

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 175:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 195:

<sup>4</sup> Լ. Եզեկյան, Բաձձու տեղծագործությունների լեզուն և ոճը, Երևան, 1975, էջ 43:

<sup>5</sup> Մ. Մեղրոյան, Ավանդակների հայոց լեզվի ոճաբանության, Երևան, 1981, էջ 130:

<sup>6</sup> Լ. Եզեկյան, Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Երևան, 1986,

որոշակիորեն սահմանազատում գրական լեզվի, ժողովրդախոսակցական և բարբառային բառապաշարները՝ նշելով, որ «Ժողովրդախոսակցական լեզուն յուրահատուկ դիրք է գրավում գրականի և բարբառայինի միջև՝ ընդհանրություններ և շփման եզրեր հանդես բերելով թե մեկի, և թե մյուսի նկատմամբ՝ չնույնանալով նրանցից ոչ մեկի հետ, առանձնանալով իբրև հաղորդակցման ինքնուրույն ֆունկցիա կատարող լեզվական միավոր»<sup>7</sup>:

Նա գրական լեզվի զարգացման ու կատարելագործման աղբյուր է դիտում ժողովրդախոսակցական բառերը և կարևոր է համարում ժողովրդական լեզուն գրական մշակման ու նորմավորման ենթարկելու, գրականի աստիճանի բարձրացնելու խնդիրը: Ժողովրդախոսակցական և բարբառային բառերը նա տարբերակում է երկու հատկանիշով՝ տարածվածությամբ և գործածության հաճախականությամբ. ըստ հեղինակի, ի տարբերություն ժողովրդախոսակցականի, բարբառային բառերը տեղայնացված են և ավելի նվազ գործածություն ունեն, սակայն նա ևս բարբառային և ժողովրդախոսակցական բառերի միջև խիստ սահմաններ չի դնում՝ զրտնելով, որ «բարբառային շերտի որոշ բառեր աստիճանաբար անցնում են ժողովրդախոսակցականի մեջ, որով էլ հենց հող է նախապատրաստվում գրական լեզվի մեջ նրանց թափանցման համար»<sup>8</sup>:

Մյուս կողմից էլ, բարբառային շատ բառեր «շունչ ու կենդանություն են ստանում» հայ մեծ գրողների կողմից գրականության մեջ գործածվելով, որոնք, ըստ հեղինակի, «նպաստում են գեղարվեստական խոսքի պատկերավորությանն ու արտահայտչականությանը, և դրանց գործածությունը մասամբ էլ պայմանավորվում է ժողովրդի մտածելակերպով և նրա՝ կենդանի խոսքին հարազատ մնալու, միջավայրի համապատասխան գունավորում ստեղծելու, տվյալ երևույթը տիպական դարձնելու և այլ հանգամանքներով»<sup>9</sup>:

Ս. Մելքոնյանը պայմանականորեն բարբառային ընդհանուր տերմինով է անվանում գեղարվեստական գրականության մեջ օգտագործվող այն բոլոր բարբառային ծագում ունեցող բառերը, որոնք գրական չեն՝ բարբառային բառերի մեջ առանձնացնելով երկու խումբ՝ զավառաբանություններ և հասարակաբանություններ: Գավառաբանությունները, Ս. Մելքոնյանի կարծիքով նեղ, տեղային բնույթ ունեն և հենու են գրական նորմայից, իսկ բարբառային բառերի մյուս խումբը՝ հասարակաբանությունները, ավելի մոտ են գրական բառապաշարին և մատչելի են հանրության մեծ մասի համար: Ըստ հեղինակի, հասարակաբանությունների մուտքը գրական լեզվի խոսակցական տարբերակ ավելի հավանական է, քան գավառաբանությունների: Ինչ վերաբերում է գավառական բառերի և գրական լեզվի փոխհարաբերությանը, Ս. Մելքոնյանը այն բաժանում է երկու շրջանի. առաջինում, երբ գրական լեզուն դեռևս նորմավորված չէ, բարբառները հանդես են գալիս որպես կազմավորվող գրական լեզվի հարստացման աղբյուր, իսկ երկրորդ շրջանում, նրա կարծիքով, հիմնական է դառնում բարբառների ոճական օգտագործումը<sup>10</sup>:

Բարբառային բառերի տարբերակման հարցում իր ուրույն մտեցումն է ցուցաբերել Էդ. Աղայանը՝ հարցը քննարկելով տարժամանակյա դիտակետով: Տարբերելով ժողովրդական ծագում ունեցող բառերի երկու շերտեր՝ նա դրանցից առանձնացնում և բարբառային է համարում այն բառերը, որոնք «չեն գործածվել գրաբարում, միջին հայերենում, վաղ աշխարհաբարում, հետևաբար և չեն կարող դիտվել նաև որպես ժողովրդախոսակցական բառ և հատկացվել աշխարհաբարյան շերտին»<sup>11</sup>:

<sup>7</sup> Է. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Երևան, 1982, էջ 51:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 53:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 95:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>11</sup> Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 296:

Այս կարգի բառերից նա նշում է օրինակ՝ **չմուշկ, գետնաճուղ, սելավ, դահուկ, սիկ, սզնի** և այլն, որոնք որևէ բարբառախմբից արդեն թափանցել են գրական լեզու՝ դառնալով նրա սեփականությունը: Սրանք ծագմամբ են միայն բարբառային:

Ելնելով բառապաշարի դասակարգման պատմական սկզբունքից՝ Աղայանը բարբառային բառերից սահմանազատում է ժողովրդախոսակցական բառերը, ինչպես՝ **ջան, դուրքան, դաչաղ, մարալ, զոզալ, չոքան** և այլն, որոնք, ըստ նրա, աշխարհաբարյան ծագում ունեն: Այսինքն՝ բարբառային բառերը «վերաբերում են ոչ հայերեն բառերի բարբառային տարբերակներին (**լիս, օխտը, արին**) և ոչ էլ այն կարգի բառերին, որոնք ընդհանուր են բարբառների մեծագույն մասին կամ բոլորին, հետևաբար նաև ժողովրդախոսակցական լեզվին (**ճզմել, ճղել, էռ, էտել, պռոշ, ճամփա, յար, չոքան**) և այլն»<sup>12</sup>:

Ժողովրդական բառ ու բանը քննարկելով պատմական հայեցակետով՝ մենք բարբառայինը դիտարկել ենք որպես մի լայն հասկացություն՝ նրա մեջ ներառելով նաև գրական հայերենին արդեն մերված այն բառերը, որոնք ունեն բարբառային ծագում:

Արդի գրական արևելահայերենի բառապաշարի չեզոք շերտ անցած հազարավոր բառեր գրական լեզուն վերցրել է բարբառներից, որոնց բարբառային համարելը ժամանակակից լեզվազգացողությամբ սխալ կլինի. նրանք արդեն ամբողջապես մերվել են մեր գրական լեզվին՝ դառնալով նրա սեփականությունը: Այս կարգի բառերի բարբառային ծագումը միայն բառարաններով կարելի է որոշել: Մակայն ժամանակակից գրական արևելահայերենում բարբառային բառաշերտը որոշելիս մենք հարկ ենք համարում ստորև առանձին խմբով ներկայացնել նաև այս կարգի բառերը՝ արդի գրական արևելահայերենի գոյացման պատմական աղբյուրները բացահայտելու միտումով: Այս բառերին մենք անդրադարձել ենք նաև՝ որպես պատմական իրողությունների, հակառակ դեպքում (ժամանակակից հայեցակետով) գրական հայերենին արդեն ձուլված բարբառային բառերը դուրս կմնային մեր քննարկումից, և չէր բացահայտվի նրանց բարբառային ծագումը:

Այսինքն, բարբառային բառերի այս խմբի մեջ մտնում են այն բառերը, որոնք գրական լեզուն վերցրել է բարբառներից՝ չունենալով համարժեքը կամ դրանք գործածելով որպես հոմանիշներ: Այս կարգի բառերը, որոնք ամբողջապես ձուլվել են մեր գրական լեզվին, դարձել նրա սեփականությունը, մենք պայմանականորեն ենք անվանել «բարբառային» ընդհանուր տերմինով: Սրանից են, օրինակ՝ **ասուլիս, աշնանացան, արծաթաքար, արյունակալել, արևաշող, ավազաքար, աղաման, արտատոց, բռնցքաչափ, բկուռուցք, բռնատար, գերեզմանաքար, գուտկատել, գինարբուք, գետատ, գայլաձուկ, գայլախնձոր, գոհանալ, գուրգուրել, դիպուկ, դեղձաչիր, դարձկար, եզրահան, երեսքող, երեքնուկ, երկտակ, թրատել, թուխալ, թխվածք, թևանցուկ, թափահարել, թանապուր, իրարանցում, իշատվույտ, լուսնահող, լուսնկա, լուսարաց, լորենի, լեփ-լեցում, լերդանալ, լացակումել, խառնաշվիռ, խաղողաքաղ, խելահաս, խտռուհուն, խղճահարվել, կեչի, կեռ, կեղևել, կիտել, կրոշաքար, կռահել, կսկիծ, կտրուկ, կտցահարել, կամակատար, կածան, հրահրել, հրնձան, հավաքույն, հացթուխ, հասկակալել, ճառագել, ճեղք, ճեղքվածք, մանկուք, մաշկել, մանրել, մաքրագարդել, մեծարանք, մեծարել, մեղրահաց, մթնշաղ, մշուշ, մշահավ, նվաղել, շանթել, շինծու, շիկագեղ, շտկել, շփանալ, ոսկեջրել, չեչաքար, պռոթկալ, պատրուսել, ջերմել, սալջարդ, սահմուկել, սերմակալել, սզնի, սյունափայտ, վահր, վահրակալել, վայնասուն, վարար, վարարել, վխտալ, տաքարյուն, տնքալ, տերևակալել, տանձուտ և այլն: Իսկ բարբառային ծագում ունեցող բառերի մյուս խումբը ժամանակակից լեզվազգացողությամբ նույնպես ընկալվում է որպես այդպիսին: Այս խմբի բառերը տարբեր տեղ են գրավում արդի գրական արևելահայերենի բառապաշարային համակարգում, որը կարելի է ներկայացնել հետևյալ խմբերով ու շերտերով:**

<sup>12</sup> Նույն տեղում:

1) Ժողովրդախոսակցական բառեր, որոնք թեպետ դեռևս պահպանում են իրենց ժողովրդական երանգը, սակայն մատչելի են հանրության մեծ մասին և կանգնած են գրական լեզվի շեմին: Սրանց մի մասն էլ գրեթե բարձրացված է գրական լեզվի մակարդակին և արդեն ազատորեն գործածվում է գրական լեզվի խոսակցական տարբերակում: Այս խմբի բառերի առանձնահատկությունն այն է, որ գրական լեզվի կողմից բարբառային բառերի յուրացումը կատարվում է հիմնականում այս շերտի միջոցով. բարբառային բառերը, անցնելով լեզվի ժողովրդախոսակցական տարբերակ, այնտեղ մշակվում են, կանոնավորվում, ապա նոր միայն յուրացվում գրական լեզվի կողմից: Այս կարգի բառերից կարելի է նշել, օրինակ արտատեր, արյունլվա, աչքածակ, աչքաքաց, անկշտում, աչքաուլունք, աչքալուսանք, աղջկատեր, աղջկատես, բացրերան, բռի, բրդահան, գյուղամեջ, գինահոտ, գեղանդավոր, դեմի-դեդին, երեսատեղ, գու-գու, թելիկ-մելիկ, լայնսիրտ, ծիծաղատեղ, ծակաչք, ծալպակաս, համով, համով-հոտով, հոգեպահուստ, ձեռքաշ, ձեռքաց, ճարակտուր, մածնաբրդոշ, մարդաթող, մարդամեռ, մարդամեջ, նագուտուզ, ողորմատեղի, ուռնատեղ, ողորմաթաս, պարզաջրել, պարզերես, սազևկան, սերտել, սրտամեռ, սրտանց, տնավարի, տնատեր, տնաշեն, տնաքանդ, քաշովի, քեռակին և այլն:

Ժողովրդախոսակցական լեզվի բառերի մեջ կարելի է առանձնացնել բառերի մի շերտ, որը, պահպանելով իր բարբառային երանգը, հաճախ է գործածվում գեղարվեստական ստեղծագործության մեջ՝ հերոսների տիպականացման և ոճավորման նպատակով, օրինակ՝ անաղուխաց, աշունքանալ, անուշբերնել, բոքոն, գանգատաքերան, գեղովի, դանթել, դեդնալ, երկինք-գետինք, թխածամ, ծամ, ծիծ, հալավ, հեծվոր, հելուն, ճոխծամ, ժածք, կուլա, կնիկարմատ, խորոտ, չանչել, պուճուր, տատմայր, տավարած և այլն:

2) Գավառական բառեր, որոնք բարբառային ծագում ունեցող բառերի մյուս խմբերից տարբերվում են ոչ միայն իրենց գործածության սահմանափակությամբ, այլև ընդգծված բարբառային բնույթով: Ըստ այդմ, այս կարգի բառերը կարելի է ներկայացնել երկու ենթախմբով:

ա) Չուտ գավառական (նեղ բարբառային) բառեր, որոնց գործածությունը սահմանափակվում է նեղ տարածքով և անմատչելի է հանրության մեծ մասին: Սրանք ունեն ընդգծված բարբառային բնույթ և հենու են կանգնած գրական լեզվի մակարդակին բարձրանալուց, օրինակ՝ անդուտ (վայրի բույս), անկամորդ (չկամ), անգա (կամակոր), այենք (համեմունք), դագա (վրան), թոմպուլա (վիճակախաղ), թուաֆ (տարօրինակ), թաքնա (մեծ թաս), լեհեք (վերմակ), խուսրել (ցավել), խշխշա (ուռուցք), խշխիշ (ցավ, վիշտ), խելի, կոճ, կոթել, կոճ, կոճղանալ (անդամալուծվել), հաքիգա (խոտեղեն), կալախ (աչքերը չոած), հարվանք (ուտելիք), կաժել (մանվածքը փաթաթել), հասլել (մշակել), դգաթթմա (կերակուր), ճան (վեզ), չառեք (քառորդ մաս) և այլն:

բ) Ընդհանուր բարբառային բառեր, որոնք տարբերվում են ոչ այնքան տարածքային սահմանափակությամբ, որքան ընդգծված բարբառային բնույթով: Այս կարգի բառերը հայտնի են բարբառների մեծ մասին և, կարելի է ասել, միջբարբառային հաղորդակցական արժեք ունեն, սակայն այս բառերը ևս շատ հեռու են գրական լեզվի մակարդակին բարձրանալուց: Այս խմբի բառերը քիչ են հանդիպում նաև գեղարվեստական գրականության մեջ: Նրանց մեր գրողները դիմում են հատկապես տվյալ գավառալեզուն ներկայացնող հերոսների խոսքը ձևավորելիս: Այս կարգի բառերից կարելի է նշել, օրինակ՝ արան-շարան, արալմարալ, արաղահոտ, աչքախուփ, ամթու, ամանլվիկ, անկ, անկ ու տրանկ, աչքատես, դափ-դիու, դալի-դուլի, գոթի, գոնչագլուխ, եղին-դեղին, ետանալ, երեսքանք, երեսքացեք, գուլամա, գիրտ ու գիրիլ, բառմա, թութուշ, թուլաթափ, ժել, ժժան, լախ, լալոզ, լիկել, լկատվել, լուք, լոք-լոք, խրխիր, խելառ, ծողղել, կաթիլք, կանթանի, կոխրճել, կոճել, հագրել, հուշտոռիկ, ձախ ու ծուռ, ճանկ ռու ճիվ, ճիծ ու պիծ, ճամփել, ճիվել, ճղել, մոքափոխ, մոու, մշուր, մշրել, մուլ-շուլ, շոռայք,

չինք, շատ, չու, չուլուփալաս, չորուչոփ, չուտ, չուտ-չփլախ, քահ ու քրտինք և այլն:

Գավառական բառերի մեջ կարելի է առանձնացնել և առանձին ենթախմբով ներկայացնել բարբառային օտար փոխառությունները, որոնք կենսունակ և գործածական են մեր առանձին գավառներում և կազմում են տվյալ գավառալեզվի բառապաշարի անբաժանելի մասը: Այս կարգի բառերից կարելի է նշել, օրինակ՝ քազազ, քազազ-խանա, քազրկան, բոշ, բողազ, բեթար, բուղա, բրիշակ, բարիշ, գուլաշ, դավթար, դովլաթ, դուշման, դուքան, դոստ, դոշ, գուլում, թազա, թիզ, թվանք, խանչալ, խարջ, հարամ, դաշաղ, դալաթ, դուրբան, դանթար, յախու, յաման, յաղու, յարաթ, նաղո, նամարո, չարդախ, պուճախ, ջղարա, ջեյրան, ջիզյար, փափախ, փարդա, փեշ, փեշքեշ, փաղիշահ, քոփակ, քոշ, ֆուխարա և այլն:

Իհարկե, նշված խմբերի սահմանները կայուն և անփոփոխ չեն, և շատ հաճախ նրանք փոփոխվում են՝ գործածության մի ոլորտից անցնելով մյուսին:

Հայ լեզվաբանության մեջ մինչև օրս ոչ միայն հստակեցված չեն բարբառային բառերի գործածության սահմանները, այլև հայագիտության մեջ դեռևս քննված չէ հայերենի բարբառային բառապաշարի, նրա առանձին շերտերի առաջացման ու գոյատևման ժամանակաշրջանը: Մինչդեռ, ինչպես հայերենի բառապաշարն ընդհանրապես, այնպես էլ հայերենի բարբառային բառապաշարը գտնվել են անընդհատական գործառության, զարգացման ու փոփոխման գործընթացի մեջ. բարբառային մի շարք բառերի գործածությունը սահմանափակվել է հին հայերեն խոսակցական լեզվով, իսկ մի շարք բառեր էլ, որոնք հնդեվրոպական ծագում ունեն, հին հայերենի խոսակցական լեզվից անցել են միջին հայերեն, այնտեղից էլ աշխարհաբար: Չգալի թվով բարբառային բառեր էլ միջինհայերենյան և աշխարհաբարյան կազմություններ են: Բարբառային բառապաշարը, սկսած միջին հայերենից և հատկապես աշխարհաբարյան շրջանում, համալրվել ու լրացվել է բառակազմական տարբեր միջոցներով կազմված հազարավոր նոր բառերով: Բարբառային բառերի գործածությունը և գրական լեզվի հետ ունեցած նրանց փոխհարաբերությունը հայերենի զարգացման տարբեր փուլերում պարզելու համար մենք կատարել ենք բարբառային բառերի պատմական դասակարգում: Բառացանկերը կազմելիս ավելի ստույգ լինելու համար մենք դիմել ենք հետևյալ աղբյուրներին:

1. Հին հայերենյան բարբառային բառերի ցանկը տրված է ըստ Հր. Աճառյանի<sup>13</sup>, Գ. Ջահուկյանի<sup>14</sup>, ԱՀԲ-ի<sup>15</sup> տվյալների:

2. Միջինհայերենյան բառացանկը կազմել ենք ըստ Միջին հայերենի բառարանի<sup>16</sup> և Ա. Սուքիասյանի<sup>17</sup> փաստարկած մի շարք բառերի:

3. Աշխարհաբարյան բառերը խմբավորել ենք՝ հիմնականում տվյալ բառի բառակազմությունից ելնելով: Նկատի ենք ունեցել նաև այն հանգամանքը, որ այդ բառերը վկայված չեն «Միջին հայերենի բառարանում»:

Այսպիսով, ըստ հայերենի զարգացման երեք փուլերի, բարբառային բառերը պատմականորեն կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

- ա) հինհայերենյան բարբառային բառեր,
- բ) միջինհայերենյան բարբառային բառեր,
- գ) աշխարհաբարյան բարբառային բառեր:

**Հինհայերենյան բարբառային բառեր:** Հինհայերենյան բարբառային բառերը մեծ մասամբ պարզ արմատական բառեր են, որոնք հնդեվրոպական ծագում ունեն, սակայն հայերեն գրական լեզվի գրավոր աղբյուրներում չեն արձանագրվել: Մրանց մի մասն էլ հայերենի բառակազմական տարբեր միջոցներով բաղադրված

<sup>13</sup> Տես Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1-ին, Երևան, 1940:

<sup>14</sup> Տես Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:

<sup>15</sup> Տես Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865:

<sup>16</sup> Տես Հ. Անեխայան, Ռ. Նազարյան, Միջին հայերենի բառարան, մաս Ա, Երևան, 1987:

<sup>17</sup> Տես Ա. Սուքիասյան, նշվ. աշխ.:

բառեր են, որոնց մի մասի գործածությունը սահմանափակվում է հայ հին խոսակցական լեզվով: Միջին գրական հայերենում դրանք գրեթե չեն հանդիպում, ինչպես՝ **բրջան** (հացի բրդուճ), **դրունագ** (խոտի տեսակ), **ըզխան** (սամիթ), **ծըծում** (ծծումբ), **հասիք** (խսիք), **մճնեհ** (մեքենա), **նուպա** (կարգ, շրջան), **շահար** (անտառ), **շահարացի** (անտառում մեծացած), **շոնիվոր** (շան ցավ կամ քաղցկեղ), **ուրդի շուրդի** (հորդ կամ շատ), **պոսպոտող** (կեղծավոր), **շլմեսակ** (վիզ), **տար** (պաշարում), **տոնթ** (բաժանված), **տակոյի** (արմատ), **տուղրան** (թագավորի նշանագիր), **քուֆա** (իբր) և այլն:

Այս կարգի բառերի մի մասի գործածությունն էլ սահմանափակվում է միջին հայերենով, ինչպես՝ **անայրեց** (չայրված), **գծողակ** (գրչակ), **թվա** (թոնիր), **թանկա** (դրամ), **խալտել** (սխալվել), **խամծերք** (կզակ), **խայտումատ** (խայտաբղետություն), **խանդակել** (խրամ բացել), **խսար** (պաշարում), **խսարել** (պաշարել), **հողվարք** (գերեզման), **միջավար** (միջակ), **մնջեղ** (մոծակ), **պալլուկ** (բողբոջ), **տոթուել** (ամփոփել) և այլն:

Հայ հին գրական լեզվի խոսակցական տարբերակում գործածված բառերի զգալի մասն անցել է միջին հայերեն, այնտեղից էլ՝ աշխարհաբար լեզվի ժողովրդախոսակցական տարբերակ: Այս կարգի բառերը, որոնք գործածական են եղել հայերենի զարգացման բոլոր երեք շրջանների ժողովրդախոսակցական լեզուներում, մենք անվանել ենք **համընդհանուր ժողովրդախոսակցական լեզվի բառեր**, ինչպես՝ **ախցիպիխց** (ափեղ ցփեղ), **անկուշտ**, **արլոր**, **քունկալ**, **գեշ**, **գործելի** (ածուխ), **թորթոշ**, **ժածումն** (ժածք), **ժամարակ**, **ժիժի** (ճպուռ), **ժուկ** (ժամանակ), **ժուռ**, **խակի**, **խիպիկ**, **խղճատանք**, **կարգել**, **կոծիծ** (գորտնուկ), **կուզ**, **հավան**, **հավկիթ**, **հոբել**, **մզել**, **մսխել**, **մրափ**, **սև երես**, **տնագ**, **փնթի** և այլն:

Հատկանշական է այն, որ բարբառային շատ բառեր, թեպետ գրաբարից էլ հին ծագում ունեն, սակայն ժողովրդախոսակցական լեզվում սկսել են գործածվել հայերենի զարգացման ավելի ուշ շրջաններում:

Գ. Ջահուկյանն իր «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ հնդեվրոպական լեզվի և արդի բարբառների փաստերի զուգադրմամբ փորձել է պարզել բարբառների այն հին (արխաիկ) գծերը, որոնք տարբերվում են գրաբարից, ծագմամբ ավելի հին՝ հնդեվրոպական են, սակայն հայ հին գրական լեզվում չեն հանդիպում: Այդ կարգի բառերը հեղինակն անվանում է բարբառային հնաբանություններ (արխաիզմներ), որով նա նկատի ունի բարբառային բնույթի հնչյունական, քերականական և բառային այն առանձնահատկությունները, որոնք գրաբարում չեն ավանդվել, տարբերվում են գրաբարի համապատասխան երևույթներից և գալիս են հայոց լեզվի զարգացման հնագույն (մախագրային) շրջաններից<sup>18</sup>: Բարբառային հնաբանությունների մեծ մասը նեղ, բարբառային բառեր են և շատ հեռու են գրական լեզվի մակարդակին բարձրամալուց: Մրանք իրենցից ներկայացնում են.

1. գրաբարից տարբեր հնչյունական ձևավորում ունեցող բառեր, ինչպես՝ **քառնալ-քեռնել**, **բողբոջ-բորբոջ**, **քուք-քիթ**, **զանփռ-զոմփռո**, **թառամ-թոռոմ**, **թոնթն**, **լեսուլ-լոսել**, **կաղին-տկողին**, **կեռ-կոռ**, **կոփել-կեփել**, **մեղու-մողիկ**, **պեղել-պողել**, **սառն-սուռ**, **փառ-փեռ**, **փերք-փուրթիկ**, **փրթիկ**, **փթթիկ** և այլն:

2. Գրաբարից տարբեր կազմություններ, ինչպես՝ **ակն-ակլակ** (ղնել), **լալիքծ-լալիքշ**, **խեճեպ-խեճեճ**, **կաղին-կաղաղ**, **կտև-կտեփ**, **մլակն-մլակ**, **մուռ-մնիճ**, **մզ-մզել**, **շղարշ-շղա**, **ջնջել-ջնջխել**, **փռել-փեղկել**, **փեղկվել**, **փթուր-փթիր**, **քերել-քերծել**, **քերթել** և այլն:

3. Գրաբարյան բաղադրյալ ձևի դիմաց բարբառային արմատական ձև, ինչպես՝ **անշուշտ-շուշտել**, **արքա-արք**, **քոժոժ-քոժ**, **զգեստ-զեստ**, **ծմակ-ծմա**, **կաղկամձել-կոնձալ**, **կողկողել-կողալ**, **ճնլել-ճնել**, **շուրջ-շուր**, **պեպեն-պեն**, **սալղղել-սղպռել**, **տիղմ-տիլ**, **ցողուն-ցող** և այլն:

4. Գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներ, ինչպես՝ **քրուկ**, **բլտիկ**,

<sup>18</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ.:



բոլորն, բիրտն, բղաղ, բողջոց, բոխ, բորիկ, բթուկ, դնգգել, թոն, լարոշ, ծլեպ, կոհմծ, կոունճ, կավառ, կլաթան, կլնդրիկ, շիվ, շոպկել, պու, տարթ, ցլեպ, փմփիսիկ, փմփիսել, քեղել, քթել, քոնած, քոնուկ և այլն:

**Միջինհայերեն բարբառային բառեր:** Այս շրջանում գործածված բարբառային բառերի մի մասը նախկին գրավոր աղբյուրներում չարձանագրված նախածևեր են, մի որոշ մասն էլ միջինհայերենյան նորակազմություններ, որոնց գործածությունը լեզվում սկսվում է հենց այդ շրջանում, ինչպես՝ ակոս, արեղաթող, աղամորդի, աժան, ախմախ, ածել, ականջացավ, աեուդող, աեուգար, աղուհաց, աղուն, ամաչկուտ, ամպուգու, ամաղուհաց, աներես, ամերձագ, ակնատ, անծակ, անկուշտ, անճար, անմագ, անցվորական, առիք, առուծախ, առուտուր, առուփախ, արեգունի, բաժինք, բարեկենդան, բշտել (բուշտ առաջանալ), բտել, բրդուն, գագ, գավ, գալ (եկող), գաղտուկ, գանգատ, գառնադմակ, գառնարած, գլգլալեն, գեղամեջ, գեղովի, գգիր, գլխաբաց, գլխիվեր, գլխացավ, գուռ, դառնալ, դարդամահ, դարուփոս, դեղնուց, դիվուտ, դիք (ձիգ, ուղիղ), դունչ, դոնեդուռ, դրուստ, դրստել, եղել, երդիկ, գատ, գոքանչ, էժան, թալանել, թամամել, թան, թացան, թթխմոր, թթվահամ, թուշ, լանդակ (խաշիլ), լապստակ, լոթի, լող տալ, խածել, խաշու, խաշ, խավիժ, խեր (բարիք, օգուտ), խնամխոս, խոթել, խորտոխիկ, ծախու, ծուռումուռ, ծպտոց, կոկոս, կոնճել, կտրիճ, կեռ, կոանալ, հարիանդ, ճոթ, ճմուռ, մաթ (դոշաք), մլուկ, մգլել, պլիկ (մանր դրամ), պուլիկ, ջոջ, ռանչպար, վահր, վոխի, ցաքան և այլն:

Միջին հայերենում բարբառային նշված գրեթե բոլոր բառերը բարբառներից անցել են աշխարհաբար լեզվի խոսակցական տարբերակ՝ դառնալով համընդհանուր ժողովրդախոսակցական լեզվի բառեր: Սրանց որոշ մասն արդեն մերվել է գրական լեզվին, ինչպես՝ աղամորդի, ականջացավ, աեուդող, աղուհաց, ամաչկուտ, աներես, անկուշտ, անճարակ, աչքացավություն, արենխում, գայլխոտ, գայլագռավ, գանգատ, գլխաբաց, գլխացավ, դեղնուց, դոնեդուռ, թթվահամ, ծուռումուռ, կտրիճ և այլն:

Անհրաժեշտ է նշել նաև, որ միջին գրական հայերենում են կատարվել մի շարք օտար փոխառություններ, որոնք լայնորեն գործածվել են մեր բարբառներում, ինչպես՝ բազագ, բագրկան, բլուզ, բարուք, բարիշել, բեգար, բլբու, բու, բուղա, բունիաթ, բրիշակ, բողազ, դավթար, դավլաթ, դուշման, դուքան, դոշ, դոստ, գանլա, թալան, լայեղ, խանչալ, խալի, խաղիչա, խուրջին, յախու, յախա, նադդ, փաղիչահ, փարդա, փեշ, քոշ և այլն:

**Աշխարհաբարյան բարբառային բառեր:** Բարբառային բառերի աշխարհաբարյան շերտը կարելի է բաժանել երկու խմբի.

1. Համընդհանուր ժողովրդախոսակցական լեզվի բառեր, որոնք աշխարհաբարին են անցել գրաբար և միջին հայերեն խոսակցական լեզուներից, ինչպես՝ ախցիփեխց, անկուշտ, աքլոր, ագապ, աթար, ախմախ, աղաթ, անմագ, անցվորական, արախճի, արեգունի, բունկալ, բաժինք, բոքոն, բտել, բրդուն, գեշ, գուռ, դարուփոս, դունչ, եղել, երդիկ, գոքանչ, էժան, թացան, թառանա, լոթի, խանճրել, խաշու, ժածք, ծախու, ծուռումուռ, ծպտոց, կուտ, կոնճել, ճմուռ, նան, պուլիկ, ցաքան, քիփ և այլն:

2. Բուն աշխարհաբարյան բառեր, որոնք չէին կարող լինել հին հայերենում. սրանք կազմությամբ աշխարհաբարյան են: Այդ բառերը վկայված չեն նաև միջին հայերենի բառարանում, ինչպես՝ աչքաբաց, աքլորականչ, բացքերան, բացքերես, գաղատեղ, գլխաբաց, գլուխկոնճի, գլխացավանք, գերանդավոր, երկուերեսանի, թելպանիր, թերմացք, թրքահոտ, թոփովի, թխածամ, լայնաիրտ, լայնաբերան, լակուտ-լուկուտ, լուսաթաթախ, լորախաշու, լեղանաք, խեմթուխելառ, խնամականչ, խռովկան, ծալպակաս, ծակաչք, ծաղկավոր, հնճվոր, հոգեդարձ, հոգեպահուստ, հոգեփրկանք, ձայն-ծպտուն, ձեռնբաց, ձեռնբաշ, կուզեկուզ, կուշտուկուտ, կալուկուտ, կոշտուկուպիտ, կովկիթ, կերուխում, կարմրաթուշ, ճլճան, ճանճըշիկ, մարդացու, մսացու, մարդամեռ, մարդաթող, մտամուղոր, մեջքախառն, մղորբերան, մածնաբրդուն, նագուտուզ, շանսատակ, շաղաթաթախ, շորացու, ոռնատեղ, ոռ-



քամուտ, ուռնաման, ոսկեշալակ, ոչուփուչ, ողորմաթաս, նշանդրեք, չոքեչոք, ցաքուցրիվ, պաղսիրտ, պառավմակ, պարզաջրել, պարզերես, պոզավոր, ջոկովի, սագական, սիրումատես, սրտաբաց, սրտաճաք, սրտամեռ, սրտապատառ, սրտացավ, սուտասան, սուտիմուտի, վարուցանք, տիրամեռ, տատմայր, տնավարի, տնաքանդ, տնովի, քաշովի, քավորկին, քարուքանդ, քթածակ, քնաթաթայս, փեսախում, փեսացու և այլն:

Այս բառերի մի մասը լայն գործածական, ժողովրդայնուսակցական լեզվի բառեր են, իսկ որոշ մասն էլ արդեն ձեռք է բերել գրական հնչողություն, ինչպես՝ աքլորականչ, բացքերան, գլխաբաց, թերմացք, ծաղկավոր, հնձվոր, մտամուր, ողորմաթաս, ուռնատեղի, նշանդրեք, ցաքուցրիվ, պարզաջրել, պարզերես, սրտաբաց, սրտացավ, քարուքանդ, փեսացու, քավորկին և այլն:

Այսպիսով, գավառական բառերի պատմական դասակարգմամբ ակնհայտ է դառնում նրանց՝ որպես գրական լեզվի համալրման հիմնական աղբյուր լինելու փաստը: Անվերապահորեն ընդունելի է նաև այն, որ գավառական (բարբառային) բառերը հայերեն գրական լեզվի երկու տարբերակներ են անցել իրենց կազմավորման հիմքում ընկած բարբառներից (Երևանի և Պոլսի):

Գրական լեզվի և բարբառների փոխհարաբերությունը մի պատմական գործընթաց է, որը շարունակվում է մինչև օրս. գավառական մի շարք բառեր աստիճանաբար ձեռք են բերում գրական հնչողություն, մի մասի գործածությունը սահմանափակվում է տվյալ բարբառի շրջանակներում, իսկ մի մասն էլ գտնվում է բարբառ-ժողովրդայնուսակցական լեզու-գրական լեզու աստիճանական գործընթացի մեջ:

**Р. Г. Саггетали - Употребление диалектных слов на различных этапах развития армянского языка.** - В данной статье цель автора - показать ход исторического развития одного из основных пластов лексики современного армянского языка-диалектизмов, испытанные ими изменения на разных этапах исторического развития языка.